


Գրալիուսը թվու յերկրմների, մայց' 2.

ՅՐԵԴՐԻՍ ԵՆԳԵԼՍ

1883 թ. ՄԱՐՏԻ 14

ԿԱՌՈՒ ԿՐՈՎ ԵԱՅՆ ՀՐԱՄԱ ԽՈՎ ԽՈՎ ԽՈՎ  
ԵԽԵՎ ԵԽԵՎ



Գրութարմեր բոլոր յերկիրմերի, միացե՛ք.

## •፩ የተጥሃኝ ክንቀፅዎች

3K13  
5-55  
Lenny  
K16 1

1883 թ. Մարտ 14

ՆԱՄԱԿՆԵՐ ԿԱՐԼ ՄԱՐՔՍԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ



ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ

1833

Թարգմանեց Վ. Թերզիբաշյան


Տեխ. Խմբաղիք Մ. Եփրիկ


Սրբազրի՝ Ա. Տեք-Մկրտչյան

Համամված և արտադրության 25 ֆետրվարի 1935 թ.

Ստուագրված և տպագրելու 8 մարտի 1935 թ.

Ցիրա 10000 Հրատ № 87 51000 տպ. 82.





Karl Marx.

1867 p.

## ԱՌԱՋԱԲԱՆ

1883թ. մարտի 14-ին, մեղնից 50 տարի առաջ,  
մեռավ կարլ Մարքսը, կոմունիզմի հանճարեղ հիմ-  
նադիրը։ Միայն կես դար և բաժանում մեղ այդ թվա-  
կանից։ Այդ կես դարի ընթացքում հեղափոխական  
մարքսիզմն իր դրոշի տակ հայաքել և տասնյակի մի-  
լիոնավոր պրոլետարների։ Մարքսի դործի մեծ չա-  
րունակողը, Լենինը, նրա հեղափոխական ուսմունքը  
բարձրացրեց նոր աստիճանի։ Լենինի դիմավորությամբ  
բայլշեիկները պատմության մեջ առաջին անգամ նվա-  
ճեցին և ամբազնդեցին պրոլետարիատի դիկտատու-  
րան, վոր գիտականորեն հիմնավորել և Մարքսը։ Նախ  
կին ցարական կայսրության վիթխարածավալ տերի-  
տորիայի վրա արդեն կառուցված և սոցիալիստական  
հասարակության հիմքը։ ԽՍՀՄ-ը վերջնականապես  
հաստատ կանգնել և սոցիալիզմի ուղղու վրա։ Լավա-  
գույն մարքսիստ-լենինիստ ընկ։ Ստալինի ղեկավարու-  
թյամբ բոլոր յերկիրների բայլշեիկները հերոսարար  
պայքարում են կոմունիզմի հաղթանակի համար ամ-  
բողջ աշխարհում։

Ֆրիդրիխ Ենգելսի անունն անխղելի կերպով կազ-  
ված և Մարքսի անվան հետ։ Մարքսը և Ենդելսը միա-  
սին ստեղծեցին պրոլետարական պայքարի հեղափո-  
խական թեորիան։ Տասնյակ տարիներ շարունակ ձեռք-  
ծեռքի տված նրանք անհաշտ պայքար մղեցին բանվոր

դասակարգի դատի համար՝ ընդդեմ բուրժուազիայի «գլուխնական» սպասարկուների, ընդդեմ մանր-բուրժուական «սոցիալիստների», ընդդեմ աջ և «ձախ» յերանդի ոպորտունիստների։ Մարքսի և Ենդելսի ձեռքով դրվեց համաշխարհային կոմունիստական կուսակցության հիմքը։

«Հնադարյան ավանդությունները, —դրում ե Լենինը, —ալատոմում են բարեկամության զանազան հուղիչ որինակների մասին։ Յելրոպական պրոլետարիատը կարող ե ասել, վոր իր գիտությունն ստեղծել են յերկու գիտնականներ և մարտիկներ, վորոնց հարաբերությունները գերազանցում են հնադարյան բոլոր ամենահուղիչ ավանդությունները մարդկային բարեկամության մասին... Նրա (Ենդելսի) սերը դեպի կենդանի Մարքսը և նրա հարդանքը մեռած Մարքսի հիշատակի հանդեպ անսահման ելին։ Այդ անողոք մարտիկը և խիստ մտածողն ուներ խորապես սիրող սիրա»։ Ահա թե ինչու Մարքսի մահը ցնցող հարված յեղափ Ենդելսի համար։ Սակայն նա չկորացավ այդ հարյածի տակ, այլ ընդունեց այն, ինչպես սաղական եր իսկական հեղափոխականին, մեծ Մարքսի զինակցին և մտերմին։ Ենդելսը Մարքսի մահից հետո ել բարձր պահեց միջազգային կոմունիզմի դրոշը, և այդ դրոշը վոչ մի բոպե չդողաց նրա ձեռներում։

Այս բրոշյուրի մեջ ամփոփված են Ենդելսի այն նամակները, վոր նա դրել ե 1883 թ. մարտի 14-ին և 15-ին իր բարեկամի մահվան անմիջական տպավորության տակ։ Նախարարնի տեղ տրված ե Ենդելսի ճառը Մարքսի գերեզմանի վրա, վորպես հավելված։

տողված և Ենդելսի մի հոդվածը «կարլ Մարքսի մահ-  
վան առթիվ» : Այդ սեղմ և անկեղծ վշտով ու արիա-  
սրտությամբ լի տողերը հանդիսանում են լավագույն  
ալսակը Մարքսի դերեղմանի վրա :

Դ պեկանը 1932 թ.

Մարքսի-Ենդելսի-Լենինի ինստիտուտ :



Կ. Մարգարի պերեղմանը Լոնգոնում Հայութի պերեղմանառանց

## ԵՆԴԵԼԱՒԻ ՃԱՌՈԾ ՄԱՐԴԱՒԻ ԴԵՐԵԶՄԱՆԻ ՎՐԱ

Մարտի 14-ին, կեսորից հետո, ժամը յերեքից քառորդ պակաս, դադարից մտածելուց արդի մտածողներից մեծաղույնը։ Նրան մենակե եյին թողել ընդդամենը միայն յերկու բուպեյով։ յերբ ներս մտանք, նրան զտանք թիկնաթոռում խաղաղ քնած, — բայց արդեն առհավետ։

Յեկրոպայի և Ամերիկայի պայքարող պրոլետարիատի համար, պատմական դիտության համար այդ մարդու մահն անհուն կորուստ է։ Շատ շուտով դդալի կղառնա այն զատարկությունը, վորը զոյացավ այդ հսկայի մահով։

Ճիշտ այնպես, ինչպես Դարվինը հայտնադորձեց որդանական աշխարհի զարդացման որենքը, Մարքուր Հայտնազործեց մարդկային պատմության զարդացման որենքը — մինչև վերջին ժամանակներս իդեոլոգիաական շերտերի տակ թաղնված այն հասարակ փաստը, վոր մարդիկ պետք է ուտեն, խմեն, պատսպարզեն և հաղողվեն — նախքան ի վիճակի լինեն դրադվելու քաղաքականությամբ, դիտությամբ, արվեստով, կրօնով և այլն, վոր, հետեւարար, զոյության անմիջական նյութական միջոցների արտադրությունը և դրանով իսկ ժողովրդի կամ եպոխայի անտեսական զարդացման յուրաքանչյուր տվյալ աստիճանը կազմում է այն հիմքը, վորից զարդանում են տվյալ մարդկանց պետական հաստատությունները, իրավունքի ըմբռնումները, ար-

վեստը և նույնիսկ կրոնական պատկերացումները, ուստի և, վորով նրանք պետք ե բացատրվեն, —և վոչ թե ընդհակառակը, ինչպես այդ անում ելին մինչև այժմ :

Սակայն այդ քիչ ե : Մարքսը հայտնագործեց նաև արտադրության արդի կասկիտալիստական յեղանակի և նրանից ծնունդ առած բուրժուական հասարակության շարժման հատուկ որենքը : Հավելյալ արժեքի հայտնագործումով իսկույն պարզություն մացվեց այդ բնագավառը, այնինչ թե՛ բուրժուական անտեսագետների և թե՛ սոցիալիստական քննադատների նախկին բոլոր հետազոտությունները իսրախափումներ ելին մթության մեջ :

Յերկու այդպիսի հայտնագործություն բավական էլլինի մեկ կյանքի համար : Յերջանիկ կլիներ նա, ուսկհաջողվեր գեթ մեկ այդպիսի հայտնագործություն Մակայն Մարքսն ինքնուրույն գյուտեր արալ յուրաքանչյուր բնագավառում, վոր նա հետազոտում եր, նույնիսկ մաթեմատիկայի բնագավառում, — իսկ այդպիսի բնագավառներ քիչ չելին, և նրանցից վոչ մեկուն նա չըրազվեց մակերեսորեն :

Այդպես եր Մարքսը վորապես գիտության մարդաբայց այդ չեր նրա մեջ գլխավորը : Գիտությունը Մարքսի համար պատմականորեն շարժիչ հեղափոխական ուժ եր : Վորքան ել բուռն հրճվանք պատմառեր նրան յուրաքանչյուր նոր հայտնագործություն վորեւ տեսական գիտության մեջ, վորի գործնական կիրառման մասին դեռևս խոսք անդամ չկար, — նրա հրճվանքը բոլորովին այլ եր, յերբ հարցը վերաբերում եր այնպիսի հայտնագործության, վոր շուտով հեղափոխական ազգեցություն եր գործում արդյունաբերության

վրա, քննէանբապես պատմական զարդացման վրա: Արինակ, նա հետեւմ եր բոլոր մանրամասնությունների մեջ գյուտերի զարդացմանը ելեկտրականության բնագավառում, և վերջերս մասնավորապես Մարսել Գեղրեցի<sup>1</sup> գյուտերին:

Վորովհետեւ Մարքսը նախ և առաջ հեղափոխական եր: Այս կամ այն յեղանակով մասնակցություն ունենալ կատիտապահութական հասարակության և նրա ստեղծածած սկստական հաստատությունների խորտակման մեջ, մամնակցել արդի պրոլետարիատի աղատագրման գործին, այն պրոլետարիատի, վորին նաև տվեց առաջին անդամ իր սեփական դրության և իր պահանջների դետակցումը, իր աղատագրման պայմանների գիտակցումը, —ահա այս եր նրա կյանքի իսկական կոչումը: Նրա տարերքը պայքարն եր: Յևլ նա պայքարում եր այնպիսի կրքով, այնպիսի համառությամբ, այնպիսի հաջողությամբ, ինչպես քիչ մարդ կարող ե պայքարել: Առաջին «Հռենոսյան Լրագիրը»՝ 1842 թ., պարեցյան «Հառաջը»՝ 1844 թ., «Բրյուսելյան Գերմանական Լրագիրը»՝ 1847 թ., «Նոր Հռենոսյան Լրագիրը»՝ 1848—1849 թ. թ., «Նյու-Յորքյան Տրիբունա»՝ 1852—1861 թ. թ., և դրանցից շատ բաղմաթիվ մարտական բրոշյուրներ, աշխատանքը կաղմակերպությունների մեջ Պարիդում, Բրյուսելում և Լոնդոնում, մինչև վոր վերջապես հիմնվեց, վորպես այդ ամենի պատճե, մեծ «Բանվորների միջազգային ընկերություն»:

1 Գեղրեցի Մարսել (1843—1918) — Փրանսիացի գիտնական ֆիզիկոս, հեռավորության վրա եներգիայի հազորգման առաջին փորձերի հեղինակը:

նը»<sup>1</sup> — այդ մի գործ եր, վորով իրոք կարող եր պար-  
ծենալ նրա ստեղծողը, յեթև նույնիսկ նա դրանից դառ  
ուրիշ վոչինչ ստեղծած չլիներ:

Ահա թե ինչու Մարքսն այն մարդն եր, վորին ա-  
մենից ավելի եյին ատում և վորին ամենից շատ եյին  
զրապարտում: Կառավարությունները — ինքնակալական  
և հանրապետական — արտաքսում եյին նրան, բուր-  
ժուանները — սկահալանողական և գերդեմոկրատական —  
իրար հետեւից զրապարտություն և անեծքներ եյին թո-  
վում նրա դվին: Նա գեն եր նետում այդ ամենը՝ ինչ-  
պես սարդի վոստայն, ուշազրություն չղարձնելով  
դրան, պատասխանելով միայն ծայրահեղ անհրաժեշ-  
տության պարագայում: Յել նա մեռալ հարդակած,  
սիրված, սուդ պատճառելով միլիոնավոր հեղափոխա-  
կան դինակիցներին ամրող Յելրոպայում և Ամերիկա-  
յում, սիրիրյան հանքերից սկսած մինչև Կալիֆորնիա,  
և յես համարձակ կարող եմ ասել. նա կարող եր ունե-  
նալ շատ հակառակորդներ, բայց հազվակ թե ունենար  
թեկուղ մեկ անձնական թշնամի:

Յեկ նրա անունը, և' նրա գործը կապրեն դարեր:

Յպագրվում ե ըստ  
Ցյարիխի «Sozialdemokrat» թերքի  
№ 13. 1883. մարտի 22.

<sup>1</sup> Առաջին հնտերնացիոնալը


ԵՆԴԻԵԼՍԸ — Ֆ.-Ա. ԶՈՐԳԵՑԻՆ

[Հեռագիր]

Լոնդոն, 14 մարտի 1883 թ.

Այսու մեռավաշտիք:

Ենդիլս



Ենդիլսի հետագիրը Զորգեցին Մարքսի մահվան մտաին

<sup>1</sup> Զորգե Ֆրիդրիխ-Անտոն (1828—1906) —գերմանական կո-  
մունիստ, Հյուսիս-Ասերբայջան Միացյալ Նահանգներում, հղելի և  
1 Խստերնացիոնալի տեղական սեկցիաների ղեկավարներից մեկը,  
իսկ Խստերնացիոնալի Պլատֆորմուրդը Նյու-Յորք տեղափոխ-  
վելուց հետո — Խստերնացիոնալի դմիավոր քարտուղարը։ Մարքսի  
և Ենդիլսի հետ մշտական նամակագրություն ունեցու

## ԵՆԳԵԼԱԾ — Վ. ԼԻԲԿՆԵԽՏԻՆ<sup>1</sup>

Հռնդան. 14 մարտի 1883 թ.

Սիրելի Լիբկնեխտ!

Այն հեռագրից, վոր յես ուղարկեցի տիկին Բերեխն<sup>2</sup> — այդ միակ ինձ հայտնի հասցեն եւ, — դուք, յերևի, գիտեք, թե ինչ սոսկալի կորուստ ունեցավ յեվրոպական սոցիալիստական-հեղափոխական կուսակցությունը։ Դեռևս անցած ուրբաթ բժիշկը — Լոնդոնի լույսագույն բժիշկներից մեկը — մեղ ասում եր, թե կան բռվոր հիմքերը յենթադրելու, վոր նա կառողջանա և ավելի քաջառողջ կլինի, քան յերեւե, հենց վոր սնունդը կաղղուրի նրա ուժերը։ Յեվ հենց այդ որվանից նա նորից սկսեց ուտել մեծ ախորժակով։ Սակայն այսոր, ցերեկվա ժամը յերկուամից հետո յես ամբողջ տունը գտա արտասուզի մեջ։ Նա շատ վատ է։ Լենինենը<sup>3</sup> առաջարկեց ինձ բարձրանալ նրա սենյակը, առելով, թե նա նիրհում եւ ինքը հազիվ յերկու բոպեյով եր հեռացել այստեղից։ Յերբ յես ներս մտա,

<sup>1</sup> Լիբկնեխտ Վիլհելմ (1826—1900) — գերմանական սոցիալ-դեմոկրատիայի հիմնադիրներից և առաջնորդներից մեկը։

<sup>2</sup> Բերդի Յուլիա (1843—1910) — գերմանական սոցիալ-դեմոկրատիայի առաջնորդ Ավգուստ Բերելի կինը։

<sup>3</sup> Լենինն-Դեմուտ Յելենա (1823—1890) — Մաքքսի ընտանիքի անդամունքն և ամենահավատարիմ բարեկամը։

նա քնած եր, բայց քնած հավիտենական քնով։ Մեր դարի յերկրորդ կեսի մեծագույն ուղեղը դադարել եր մտածելուց։ Մահվան անմիջական պատճառի մասին յես չեմ ուզում դատել բժիշկներից տարբեր կերպով։ ամբողջ գեպքն այնքան խճճված ե, վոր նույնիսկ բժիշկներին հարկ կլիմներ թղթի գեղեց ուրել այդ մանրամասն նկարագրելու համար։ Բայց, վերջիվերջո, այժմ այդ կարենոր ել չե։ Վերջին մեց շաբաթվա ընթացքում յես բավական յերկուող կրեցի, և կարող եմ միայն ասել, վոր իմ կարծիքով, նախ իր կնոջ մահը, իսկ այսուհետեւ Զեննիին մահը, վորը տեղի ունեցավ չափաղանց կրիտիկական մոմենտում, կատարեցին իրենց դործը և մոտեցրին մախմանը։

Հակառակ նրան, վոր այսոր յերեկոյան յես տեսա նրան անշարժ պառկած մահճակալում, հավիտյան սառած դեմքով, այնուամենայնիվ յես չեմ կարողանում ինձ պատկերացնել, վոր այդ հանճարեղ ուղեղը իր զզոր մտքով այլևս չի հարստացնելու յերկու կիսագունդերի պրոլետարական շարժումը։ Նրան ենք մենք պարտական այն բոլորը, ինչ մենք դարձել ենք այժմ։ և ամբողջ արդի շարժումը դարձել ե այն, ինչ վոր ե հիմա, չնորհիվ նրա տեսական և դործնական գործունեյության։ առանց նրան մենք այժմ ել դեռևս կիսարխակիեցինք մթության մեջ։

Քռ՝ Ֆ. Ծնդելս։

Լևի Զեննի (1844—1883) Մարքսի մեծ աղջիկը, Փրան-սիական սոցիալիստ Շարլ Լոնգեի կինը։

## ԱՆԳԵԼԱԾ — Ե. ԲԵՐՆՇՏԱՅՆԻՆ<sup>1</sup>

Լոնդոն, 14 մարտի 1883 թ.

Սիրելի Բերնշտայն!

Իմ հեռաղիրը Դուք, յերկի, ստացել եք: Այդ կոտարվեց սոսկալի արագությամբ: Աղաղայի վրա լավագույն հույսեր կային, բայց այսոր առավոտյան՝ ուժերի հանկարծական անկում, վորից հետո նապարզապես քնեց: Յերկու բուլեյում այդ հանճարեղ ուղեղը դադարեց մտածել, և հենց այն ժամանակ, յերբ բժիշկները տալիս եյին ամենափայլում հույսերը: Թե ի՞նչ եր նշանակում մեղ համար այդ մարդը թեորիայի բնագավառում, իսկ բոլոր վճռական մոմենտներին — նաև պրակտիկայի ասլարեղում, այդ ժամանակար կարող եւ կազմել միայն նա, ով նրա հետ յեղել եւ յերկար ժամանակի ընթացքում: Նրա հետ միասին յերկար ժամանակով կչքանա և նրա լայն մտահորիզոնը: Շարժումը միջնակիր ճանապարհով, բայց արդեն չի լինի այն հանդիսու, պատեհ, խոհում զե-


1 Բերնշտայն եղաբերդ, (1850—1932) — գերմանական ոսցիալ-գեմոկրատ, 1880—1890 թ. թ. կուսակցության սրդան «Սոցիալ-գեմոկրատ»-ի խմբագիրն եր. Ենդեւոք մահից հետո բացահայտորեն դավաճանեց մաքսիզմին և դարձավ ռեֆորմիզմի զլիավարականը:

կամարությունը, վոր քանիցս պահպանել և շարժումը  
յերկար թափառումներից մոլոր ուղիներում:

Մանրամասնությունների մասին մի ուրիշ անդամ:  
Հիմա ժամը 12-ն ե, իսկ յես ամբողջ որը և յերեկո-  
յան ստիպված եմ յեղել նամակներ դրել և վաղ առէ  
դանազան գործերով:

ԶԵՐ՝ ՖԲ. Ենգելս:

A 1  
4669



## ԵՎԴԻՑԼՍԲ — Ի. Ֆ. ԲԵԿԿԵՐԻՆ:

Հոնդոն, 15 մարտի 1883 թ.

Սիրելի ծերուկ!

Ուրախացիր այն բանի համար, վոր դու դեռ անցյալ աշնանը տեսար Մարքսին, ել դու նրան յերբեք չես տեսնի: Յերեկ ճաշից հետո, ժամը 2-ից 45 րոպէ սնց, հաղիվ յերկու րոպեյով նրան մենակ թողնելուց հետո, գտանք նրան բաղկաթոռում՝ քնած: Մեր կուսակցության ամենազորավոր ուղեղը դադարեց մտածելուց, ամենազորեղ սիրտը, վոր յես ճանաչել եմ յերբեկ, դադարեց բարախելուց: Տեղի յե ունեցել, հայանաբար, ներքին արյունահոսություն:

Այժմ յես և դու, թերես, վերջիններն ենք մինչև 1848 թվի շրջանի հին գվարդիայից: Դե, ի՞նչ արած, մենք կմնանք պոստի վրա: Գնդակները սուլում են, ընկնում են ընկերները, բայց մեզ յերկուսիս համար այդ արտասովոր չե: Յեզ յեթե մեզանից մեկնումեկին դիպչի գնդակը — վնաս չունի, միայն թե այնպես դիտչի, վոր շատ յերկար չգալարվենք:

Քո հին մարտական ընկեր՝

Ֆ. Անգելս:

1 Բեկեր Յոհանն-Ֆիլիպ (1809—1886) — գերմանական կոմունիստ, 1848-1849 թ. գերմանական հեղափոխության վեաերան, եմրգրացիայում յեզած ժամանակ ժրնեռում յեղել ե 1 Ինսերնացիոնալի կազմակերպիչներից մեկը և ակտիվ մտանակիցը:

## ԵՆԳԵԼԱԾ — Ֆ. Ա. ԶՈՐԴԵՑԻՆ

Առնդու, 15 մարտի 1883 թ.  
յերեկոյան 11 ժ. 45 ը.

Միքայիլ Զորդել

Թո հեռագիրն ստացվեց այս յերեկո : Սրտազին  
չնորհակալություն !

Մարդսի առողջական վիճակի մասին քեզ կանոնա-  
վոր կերպով հաղորդելու հնարավորություն չկար, վո-  
րովհետեւ այդ վիճակը շարունակ փոփոխվում եր : Հա-  
մասնա կերպով կհաղորդեմ քեզ գլխավորը :

Իր կնոջ մահվանից քիչ տուաջ, 1881 թ. հոկտեմբե-  
րին, նա հիվանդացավ պլեվրիտով : Առողջանալուց հե-  
տո, 1882 թ. փետրվարին նրան ուղարկեցին Ալժիր,  
բայց ճանապարհին, ցուրտ և խոնավ յեղանակի պատ-  
ճառով, նա հիվանդացավ և այնտեղ հասավ նոր պլե-  
վրիտով : Զգվելի յեղանակը չեր փոխվում . հաղիվ եր  
բուժվել, նկատի ունենալով վրա հասնող ամառվա  
շողերը, նրան ուղարկեցին Մոնտե-Կարլո (Մոնակո) :  
Այնտեղ նա հասավ ելի պլեվրիտով, բայց ավելի թեթև  
ձեռով : Նորից զղվելի յեղանակ : Առողջանալուց հետո,  
վերջապես, նա մեկնեց Արժանտեռյլ, Պարիզի մոտիկ,  
իր աղջկա — տիկին Լոնդեյի մոտ : Այնտեղ նա ոգտվեց  
մոտակայքում գտնվող Անդիենի հանքային աղբյուր-  
ներից իր հին բրոնխիտը բուժելու համար : Այնտեղ յե-  
ղանակն ելի զղվելի յեր, բայց և այնպես բուժումն  
ողնեց : Հետո նա 6 շաբաթով մեկնեց Վեվե, վորտե-

զից նա վերադարձավ սեպտեմբերին, ըստ յերեսույթին  
գըեթե առողջ: Նրան թույլատրված եր ձմեռն անցկաց-  
նել Անդլիայի հարավային ծովափում: Ասենք, ինքն  
ել այնքան եր ձանձրացել անդործ թափառաշրջիկ  
կյանքից, վոր մի նոր տարադրում դեպի Յեվրոպայի  
հարավը, հավանաբար, բարոյապես կլնասեր նրան  
նույնչափով, վորչափով կհոգներ Փիդիկապես: Յերբ  
սկսեցին Լոնդոնի մշուշները, նրան ուղարկեցին Ռւայտ  
կղզին: Այնտեղ անձրեց տեղում եր անդադար. նա  
կրկին մրսեց: Նոր տարվա առթիվ յես և Շորլեմերը՝  
ուղեցինք նրան այցելության դնալ, բայց այստեղ ստաց-  
վեցին լուրեր, վորոնք պահանջում եյին, վոր Տուսուն:  
իսկույն մեկնի այնտեղ: Յեվ ահա հանկարծ Զևնիի  
մահը, նա վերադարձավ այստեղ նոր բրոնխիտով: Այդ  
բոլորից հետո և նրա տարիքում այդ յերկյուղ եր ներ-  
շնչում: Բացի այդ, տեղի ունեցան բաղմաթիվ բար-  
դություններ, հատկապես ուռուցքը թոքի մեջ և ան-  
հավատալի արագ ռևժասպառություն: Հակառակ դրան,  
հիվանդության ընդհանուր ընթացքը բարենպաստ եր,  
և դեռևս անցած ուրբաթ, նրան բուժող բժիշկը, Լոն-  
դոնի հավագույն յերիտասարդ բժիշկներից մեկը, վո-  
րին հատկապես հանձնարարել եր նրան Ռեյ Լանկաս-  
տերը, մեղ տալիս եր ամենափայլում հույսեր: Սա-  
կայն ով գեթ մի անդամ միկրոսկոպի տակ դիտել և  
թոքային հյուսվածքը, նա դիտե, թե վորքան մեծ և  
արյունատար անօթի սլատի ծակվելու վտանգը թոքի  
մեջ յեղած թարախակալման պարագայում: Յեվ դրա  
համար յես վեց շաբաթ շարունակ ամեն առավոտ  
փողոցի անլյումից շրջվելիս, մահացու վախով նա-

յում եյի, թե չմնի լուսամուտների վարագույրներն  
իջեցրել են: Յերեկ ցերեկվա ժամը 2 և կեսին — այդ  
ամենահարմար ժամն եր նրան այցելելու համար, —  
յս գնացի այնտեղ և ամբողջ տունը զտա արտասուքի  
մեջ. ըստ յերեսույթին, վախճանը մոտիկ է: Յես սկսե-  
ցի հարցուվիրձ անել, փորձեցի գտնել պատճառը,  
մխիթարել: Ինձ ասացին, վոր պատահել ե մի փոքր  
արյունահոսություն, բայց դրանից հետո իսկույն  
վրա յե հասել ուժասպառություն: Մեր անդուդական  
պառակ լենիսնը, վորը խնամում եր նրան այնպես,  
ինչպես վոչ մի մայր չի խնամել իր դավակին, վեր  
բարձրացավ ու իսկույն ևսթ վերադարձավ. նա նիր-  
հում ե, յես կարող եմ դնալ նրա մոտ: Յերբ ներս  
մտանք, նա քնած եր հավիանական քնով: Զարկե-  
րակը և շնչառությունը չքացել եյին: Այդ յերկու  
բուզեյում նա խաղաղ և առանց ցավի վախճանվել եր:

Բնական անհրաժեշտության բերումով պատահող  
բոլոր անցքերը, վորքան ել նրանք սարսափելի լինեն,  
իրենց մեջ իսկ պարունակում են մխիթարություն:   
Այդպես ել այս անդամ: Բժիշկների արվեստը, գուցե,  
նրա համար կապահովեր բուսական վտիտ գոյու-  
թյուն, վոչ մխանդամից, այլ հետզհետե մեռնող ան-  
զոր մի եյակի կյանքի միքանի տարիներ, ի մեծ փառ  
բժշկական արվեստի: Սակայն մեր Մարքսը յերեք  
այդ չեր տանի: Ապրել, իր առջե ունենալով բաղմա-  
թիվ անավարտ աշխատություններ և տանտալյան  
տանջանքներ կրելով դրանք ավարտելու ցանկությու-  
նից և այդ անելու անհնարությունից, —այդպես ապ-  
րել հաղար անդամ ավելի դառն կլիներ նրա համար,

քան նրան հասած խաղաղ մահը : «Մահը դժբախտություն ե վոչ թե մեռնողի , այլ կենդանի մնացողի համար» — սիրում եր կրկնել նա Եսլիկուրի՝ խոսքերը : Յեզ տեսնել , թե ինչպես այդ հզոր , հանճարեղ մարդը քաշ ե տալիս իր գոյությունը , ինչպես ավերակ , ի մեծ փառս բժշկական գիտության ե ի հաճույս Ֆիլիստերների , վորոնց նա իր լավ որերին այնքան հաճախ ջարդ ու փշուր եր անում , —վո՛չ , հազար անդամ ավելի լավ ե այն , ինչ պատահեց , հազար անդամ ավելի լավ ե վաղը չե մյուս որը նրան տանել և դնել դերեզման , այնտեղ , ուր հանդչում ե նրա կինը :

Այն բոլորից հետո , ինչ վոր պատահել ե դրանից առաջ և վորը նույնիսկ բժիշկները չդիտեն այնպես , ինչպես յես դիտեմ այդ , իմ կարծիքով , միայն այդ եր յելքը :

Թող այդպես լինի : Մարդկությունը մի գլխով ցած իջավ , և հենց ամենից նշանավոր գլխով այն բոլոր գլուխներից , վոր ուներ նա ներկայումս : Պրոլետարիատի շարժումն առաջ ե ընթանում իր ճանապարհով , բայց չկա այն կենտրոնական կետը , ուր քնականարար դիմում եցին վճռական մոֆենտներին Փրանսացիները , ուսւաները , ամերիկացիները , գերմանացիները և ամեն անդամ ստանում եյին հստակ , անհերքելի խորհուրդ , վոր կարող եր տալ միայն դիտությամբ սպառազեն հանճարը : Տեղական աստղերի և մանր տաղանդների , դաւցե և շարլատանների ձեռներն այժմ արձավկեցին : Վերջնական հաղթանակն ապահովված ե , բայց ըրջանցիկ ճանապարհներ , ժամա-

նակալոր և մասնակի դեպերումներ, —առանց այն ել  
անխուսափելի, —այժմ շատ ավելի կլինեն։ Դե՛, դրա  
դեմք մենք պետք եւ առնենք, այլապես — ել ինչո՞ւ  
Համար ենք մենք ապրում։ Ահա՛ թե ինչու մենք դեռևս  
չենք կորցնում արիությունը։

Քո՞ Ֆ. Սնգելս։

<sup>1</sup> Նորլեմեր Կարլ (1834—1892) — գերմանական կոմունիստ,  
քիմիայի պրոֆեսոր Մանչ՛ստրում, Ենգելսի բարեկամը։

<sup>2</sup> Տառի — Մարքս Ելենորա (1856—1898) — Մարքսի կրտսեր  
աղջիկը, անգլիական բանվորական ջարժման ակտիվ մասնակից։

<sup>3</sup> Խպիսոր (341—270 մ. թառշ) — հին հունական փիլի-  
սոփա, մատերիալիստ։

## ԵՆԴԵԼԱԾ — Ֆ. ԼԵՍՆԵՐԻՆ<sup>1</sup>

Լոնդոն, 15 մարտի 1883 թ.

Սիրելի Լեսներ!

Մեր ծերուել Մարքսը յերեկ, ժամը 3-ին խաղաղ  
քնով ննջեց Հավիտյան։ Մահվան անմիջական պատ-  
ճառը, Հավանաբար, ներքին արյունահոսությունն է։

Թաղումը տեղի կունենա շաբաթ որը ժամը 12-ին։  
Տուսսին խնդրում ե քեզ ներկա լինել հուղարկավո-  
րությանը։

Շատ եմ շտապում։

Քո՝ Ֆ. Նեգելս։

Լոնդոն 15 մարտ 1883

Հայոց Եղիշեաց

Կայ. ձեռ Պար չ' գրեած  
ան ու. Կոյսից օրից ին ուսու-  
ռաց պարագան, ուստի ու յանձնի  
ու պահպան տեսաց մաս Եղիշեաց

Տօ Եղիշեաց պահպան, առ առ առ ու  
առ 10 օր մեջ 2 լի օր են այս  
առ յանձնեաց

Ի յոց բար

Հ. Եղիշեաց

1. Լեսներ՝ Ֆրիդրիխ (1823—1910)՝ գերմանական կոմունիստ,  
գերմանի և Խոտենացիոնալի Գլխավոր խորհրդի անդամ։

ԿԱՐԼ ՄԱՐՔՍԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

Մարքոի մահից հետո յես ստացա ցավակցության ելի միքանի արտահայտություններ, վորոնք ցույց են տալիս, թե վորքան լայն արձադանդ ե դժուլ այդ տխուր դեմքը, և յես իմ սպարտականությունն եմ համարում հաղորդել նրանց մասին:

Մարտի 22-ին տիկին Ելեոնորա Մարքոը «Դեյլի Նյուդ»-ի խմբադրությունից ստացավ հետեւյալ հեռագիրը Փրանսերեն լեզվով.

«Մոսկվա, 18 մարտի: «Դեյլի Նյուդ»-ի խմբադրություն, Լոնդոն: Բարի յեղեք հաղորդել պարոն Ենգելսին, «Աշխատավոր դասակարդերն Անդլայում» դրքի հեղինակին, հանգուցյալ Կարլ Մարքսի մտերիմ բարեկամին, մեր ինդիքքը՝ դնելու «Կապիտալ»-ի անմոռաց հեղինակի դադաղի վրա մի պսակ հետեւյալ մակարդությամբ.

Բանվորների իրավունքների համար մուտքանչողին թերիայի ասպարիդում և հանուն այդ թերիայի կենսագործման—Մոսկվայի Գետրովսկի գյուղատնտեսական ակադեմիայի ուսանողներ:

Պ. Ենդելսին խնդրվում ե հաղորդել իր հասցեն և սպակի արժեքը. ծախսերը կհատուցվեն նրան անհապաղ:

Մոսկվայի Գետրովսկի ակադեմիայի ուսանողներ:

Հեռագիրն ուշացել եր, վորովհետեւ թաղումը տեղի ունեցավ մարտի 17-ին:

Այնուհետև, բարեկամ Պ. Լալրովը մարտի 31-ին  
Պարիզից ինձ փոխադրեց 124,50 ֆր. = 4·18·9 ֆ.  
ստ., վոր ուղարկել Եյխ Պետերբուրգի տեխնոլոգիա-  
կան ինստիտուտի ուսանողները և ոռւս ուսանողու-  
հները նույնպես կազմ Մարքսի գերեզմանի վրա  
պսակ դնելու համար :

Յերրորդ, «Սոցիալ-դեմոկրատ»-ը անցյալ շաբաթ  
հաղորդեց, վոր Աղեսայի ուսանողները ցանկություն  
են հայտնել իրենց անունից պսակ դնելու Մարքսի  
գերեզմանի վրա :

Քանի վոր Պետերբուրգից ստացված դրամը լիու-  
մի բավական եր յերեք պսակի համար ել, ապա յես  
թույլ տվի ինձ այդ գրամով պսակներ դնել նաև  
Մոսկվայի և Ռդեսայի կողմից։ Մակագրությունների  
պատրաստելը, վորն այստեղ անսովոր գործ է, վորոշ  
ուշացում պատճառեց, բայց պսակները կդրվեն յե-  
կող շաբաթվա սկզբին, վորից հետո յես հնարավորու-  
թյուն կունենամ «Սոցիալ-դեմոկրատ»-ի եջերում հա-  
շիվ տալ ստացված դրամների ծախսման մասին։

Կան Զոլինգենից կոմունիստական կրթական բանվորա-  
զեցիչիության միջոցով ստացված և մի մեծ և դե-  
մքան պսակ. «Մարքսի գերեզմանի վրա՝ Զոլինգենի  
ժամաների, դանակների և սրերի արտադրության  
շինատող բանվորներից»։ Յերբ մարտի 24-ին  
ձենք գնում եյխնք այս պսակը, տեսանք, վոր ինչ-վոր  
մեկի սրբապիղծ ձեռքը կտրել և տարել եր «Սոցիալ-  
դեմոկրատ»-ի և կոմունիստական կրթական բանվո-  
րական միության կողմից դրված պսակների մետաքսե  
կարմիր յերկար ժապավենները։ Վարչության խոր-  
հըդին տրված գանգատն ամենեին չոգնեց գործին,

բայց հավանաբար կասղահովի պահպանությունն առաջարկում :

Սլավոնական մի ընկերություն Շվեյցարիայում, ՀՀույս հայտնելով, վոր Մարքսի հիշատակը կհարզվէ Կարլ Մարքսի անդամ միջազգային Փոնդի հիմնումով՝ աղատադրական մեծ պայքարի դոհերին ողնելու և այդ պայքարին աջակցելու համար», ուղարկում ե իր առաջին մուծումը, վոր առայժմ յես պահում եմ ինձ մոտ : Այս ծրագրի բախտը կախված ե, անշուշտ, գլխավորապես այն բանից, թե այդ արդյո՞ք համակրություն կդանի, ուստի և յես այդ հրապարակում եմ այստեղ :

Թիերթերում պատվող սուստ լուրերին փաստեր հակադրելու համար, յես հաղորդում եմ հետեւյալ կարճ տեղեկությունները մեծ թերետիկի և առաջնորդի հիվանդության ընթացքի և մահվան մասին :

Գրեթե ամբողջովին բուժված լուրդի հին հիվանդությունից, չնորհիվ կարլսբադում բուժվելու յեւյակ կուրախն, Մարքսը առուսպում եր միայն ստամոքսի խրոնիկական հիվանդությամբ և ջղային ծայրանեղ հոգնածությամբ, վոր արտահայտվում եր գլխացավով և մանավանդ համառ անքնությամբ : Այդ յերկու յերեսութները քիչ թե շատ դադարեցին ամսանը ծովային կորուրա հաճախելուց հետո և վերանորոգվեցին ավելի սուր ձևով միայն նոր տարուց հետո : Կոկորչի խրոնիկական հիվանդությունը, հաղը, վորը նույնակես նպաստում եր անքնությանը, և խրոնիկական բրոնխիտոն առհասարակ ամենից ավելի քիչ եյին նեղացնում : Սակայն հենց դրանց եր վիճակված

լինել նրա մահվան պատճառը։ Իր կնոջ մահից չորս  
թե հինգ շաբաթ առաջ նա հանկարծ ստացավ կրծքա-  
կողային պլեվրայի սաստիկ բորբոքում (պլեվրիտ),  
վորը բարդացավ բրոնխիտից և սկսվող թոքերի բոր-  
բոքումից (պնեվմոնիա)։ Հիվանդությունը շատ վտան-  
գավոր եր, բայց անցնում եր բարենպաստ։ Այնուհե-  
տեւ նրան ուղարկեցին նախ՝ Ուայտ կղղին (1882 թ.  
ակղթին), իսկ հետո՝ Ալժիր։ Ճանապարհորդության  
ժամանակ ցուրտ եր, և նա Ալժիր հասավ նոր պլեվրի-  
տով։ Սովորական պարագաներում այդ առանձին  
վտանգ չեր սպառնա, բայց ձմեռը և դարունն Ալ-  
ժիրում ցուրտ եյին և անձրևոտ, ինչպես յերրեք-  
ապրիլին զո՛ւր եյին փորձում տաքացնել սեղանատու-  
նը։ Այսպիսով, ընդհանուր դրությունը լավանալու  
փոխարեն վերջիվերջո ավելի վատացավ։

Ալժիրից ուղարկվելով Մոնտեկարլո (Մոնակո),  
Մարքսը, ճանապարհին տիրող ցուրտ և անձրևային  
յեղանակի պատճառով, այնտեղ հասավ յերրորդ,  
բայց ավելի թեթև պլեվրիտով։ Մինչ այդ համառո-  
րեն շարունակվում եյին վատ յեղանակները, վոր նա  
կարծես իր հետ եր բերել Աֆրիկայից։ Այսպիսով,  
այստեղ ել ապաքինման փոխարեն՝ կոխվ նոր հիվան-  
դության դեմ։ Ամառվա սկզբին նա զնաց իր աղջկա,  
տիկին Լոնդեյի մոտ՝ Արժանտեռոյլ, և իր խրոնիկա-  
կան բրոնխիտը բուժելու համար ոգտվեց մոտակայ-  
քում գտնվող Անդիենի հանքային լողանքներից։ Հա-  
կառակ համառորեն անձրևոտ ամռանը, բուժումն ա-  
ռաջ եր գնում, թեև դանդաղ, սակայն բժիշկներն այ-  
նուամենայնիվ դոհ եյին։ Հետո նրան ուղարկեցին  
Ժընեվի լճի ափին գտնվող Վելե, այստեղ նա այն-

քան լավացավ, վոր նրան թույլատրեցին ձմեռն անց-  
կացնել — ճիշտ ե, վոչ Լոնդոնում, —բայց և այսպիս  
Անգլիայի հարավային ծովափում։ Այստեղ նա պատ-  
րաստվում եր, վերջապես, կրկին անցնել իր աշխա-  
տանքներին։ Յերբ սեսլտեմբերին նա վերադարձավ  
Լոնդոն, նա առողջ եր յերեսում և հաճախ ինձ հետ  
ժիասին, անտրտունջ, բարձրանում եր Հեմսլստեղի  
բլուրը (մոտ 300 վոտք բարձր իր տնից)։ Յերբ սկսե-  
ցին վրա հասնել նոյեմբերյան մառախուզները, նրան  
ուղարկեցին Վենտնոր, Ուայտ կղզու հարավը։ Սար-  
կայն այստեղ ել յեղանակն անձրեային եր և մառախ-  
լազար։ Դրա անխուսափելի հետևանքը յեղավ այն,  
վոր նա կրկին մրսեց, սկսեց հաղալ և այլն, մի խոս-  
քով, առողջությունը քայքայող տնային բանտարկու-  
թյուն, փոխանակ թարմ ողում կաղղուրող շարժման։  
Այդ ժամանակ մեռավ տիկին Լոնդոն։ Հաջորդ որը  
(Հունվարի 12-ին) Մարքսը յեկավ Լոնդոն արդեն իս-  
կական բրոնխիտով։ Դրան չուտով միացավ կոկորդի  
բորբոքումը, վորը գրեթե զրկեց նրան կուլ տալու  
հարավորությունից։ Նա, ով կարողանում եր ստոյթ-  
կյան անտարբերությամբ տանել մեծագույն տաջանք-  
ները, դերադասում եր խմել մի լիտր կաթ (վորի  
հանդեպ նա իր ամբողջ կյանքում դղվանք եր դղա-  
ցել), քան ընդունել համալատասխան պինդ կերա-  
կուր։ Փետրվարին յերեսն յեկավ թոքի ուռուցքը։  
Դեղերն այլևս չեյին ներգործում այդ որդանիդմի  
վրա, վորը վերջին 15 ամիսների ընթացքում լցված եր  
բժշկական ամեն տեսակ դեղորայքներով։ Նրանք  
պատճառում եյին լոկ ախորժակի և մարսողության  
թուլացում։ Նա որեցոր նիհարում եր նկատելի կեր-

պով։ Բայց և այնպես հիվանդությունն ընդհանուր առմամբ ընթանում եր բարենպաստ։ Բըռնխիտը գրեթե անցել եր, ավելի հեշտ եր կուլ գնում։ Բժիշկները տալիս եյին ամենափայլուն հույսերը։ Մի անդամ, յերբ յեկա այնտեղ ժամը յերկուսից յերեքի միջև — այդ ամենահարմար ժամանակն եր նրան այցելելու համար, — յես ամբողջ տունը գտա արտասուքի մեջ։ Նա շատ վատ ե, ըստ յերեսույթին մոտենում ե վախճանը։ Յեվ այնուամենայնիվ առավոտյան, — պատմում եյին ինձ, — նա հաճույքով խմել եր գինին, կաթը, կերել եր ապուրը։ Հավատարիմ պառավ Լենխեն Դեմուաը, վորը նրա բոլոր յերեխաներին զաստիարակել եր որորոցից սկսած և քառասուն տարի ապրել նրա տանը, բարձրացավ նրա սենյակը և իսկույն վերադարձավ։ «Դնանք, նա նիրհում ե»։ Յերբ ներս մտանք, նա քնած եր, սակայն քնած հավիտենական քնով։ Զի կարելի ցանկալ ավելի թեթև մահ, քան այն, վոր դտավ Կարլ Մարքսն իր բաղկաթուում։

Իսկ այժմ վերջացնելով՝ մի բարի լուր.

«Կապիտալ»-ի յերկրորդ հատորի ձեռագիրն ամբողջովին պահպանված ե։ Թե վո՞րքան նա այդ վիճակով պիտանի յե տալագրության, — այնտեղ կա 1000 մեծադիր եջ — յես դեռևս դատել չեմ կարող։ Սակայն «Կապիտալի շրջանառության պրոցեսը» և «Ամբողջական պրոցեսի ձեերը» ավարտված են 1867—1870 թվերին կատարված մշակման ժամանակ։ Կա ավելի ուշ կատարված մշակման սկիզբը և առատ նյութ քննուդատական քաղվածքների ձեռվ, հատկապես ոռուսական հողային հարաբերությունների մասին, վարան-


ղից, հավանաբար, վորոշ բան կարելի կլինի ոգտապործել:

Բանավոր կարդաղրության Համաձայն, նա իր կրտսեր աղջիկ Ելեոնորային և ինձ նշանակել եր պրական կտակակատարները:

Ֆրիդրիխ Նիցելս:


Լոնդոն, 28 ապրիլի 1883 թ.

Տպված է ըստ Ցյուրիխի  
«Socialdemokrat» թերթի  
№ 19, 3 մայիսի, 1883 թ.



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒՅԹ ՅՈՒԹԻՆ

	Եղ.
<b>ԱՐԱՋԱՐԱՆ</b>	<b>5</b>
Ենգելսի ճառը Մարքսի գերեզմանի վրա . . . . .	9
Ենգելսը—Ֆ.-Ա. Զորգեյին (հեռատէիր), 14 մարտի 1883 թ. .	13
Ենգելսը—Վ.-Լիբեկնեխտին, 14 մարտի 1883 թ. . . . .	14
Ենգելսը—Ե.-Ռեբնջտայնին, 14 մարտի 1883 թ. . . . .	16
Ենգելսը—Ի.-Ֆ. Բեկկերին, 15 մարտի 1883 թ. . . . .	18
Ենգելսը—Ֆ.-Ա. Զորգեյին, 15 մարտի 1883 թ. . . . .	19
Ենգելսը—Ֆ. Լեսներին, 15 մարտի 1883 թ. . . . .	24
<b>ՀԱՎԵԼՎԱԾ</b>	
Ֆ. Ննզելս Կարլ Մարքսի մահվան առթիվ . . . . .	25
<b>ՆԿԱՐՆԵՐ</b>	
Կարլ Մարքս. 1867 թ. . . . .	4
Կ. Մարքսի գերեզմանը Լոնդոնի Կոյդեթի գերեզմանատանը	8
Ենգելսի հեռադիրը Զորգեյին Մարքսի մահվան մասին . .	18
Ենգելսի նամակը Ֆ. Լեսներին Մարքսի մահվան մասին . .	24



ԳԱԱ Հիմնարար գիտ. գրադ.



FL0039831

(1009)  
4166 40 ч.

A I  
4669

Г.П.Б. в Лигре

А. 1933 г.

Лига Наций

Ф. Вигельс

14 марта 1883 г.

Партиздат, Эривань 1933